

Արձանագրություն

**Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության
և
Ֆրանսիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության
միջև
Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում ֆրանսերենի
ուսուցման մասին Համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին**

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը - և
Ֆրանսիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարարությունը (այսուհետ՝ կողմեր)
Համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Ֆրանսիայի
Հանրապետության Արտաքին գործերի և Եվրոպայի հարցերով նախարարության միջև
Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում ֆրանսերենի ուսուցման
մասին 2011 թ. մարտի 18-ին ստորագրված Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին
ենթակետը փոփոխվում է հետևյալ կերպ.

«1) ստեղծել հանրակրթական դպրոցների 2-ից 12-րդ դասարաններում ֆրանսերեն (եզվի
ուսուցման խորացված ծրագրեր»:

Հոդված 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Արձանագրության ուժի մեջ մտնելու համար
անհրաժեշտ ներքին ընթացակարգերի իրականացման մասին Կողմերի ծանուցումներից վերջինի
ստանալուն հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

Կատարված է Երևանում, 2012թ. հուլիսի 13-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն և
ֆրանսերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

**Հայաստանի Հանրապետության
Կրթության և գիտության նախարար՝**

**Ֆրանսիայի Հանրապետության
Արտաքին գործերի նախարարի անունից՝**



Արմեն ԱՇՈՏՅԱՆ



Անրի ՌԵՆՈ
Հայաստանում Ֆրանսիայի Դեսպան

**PROTOCOLE D'AMENDEMENT A LA CONVENTION
ENTRE
LE MINISTERE DE L'EDUCATION ET DE LA SCIENCE
DE LA REPUBLIQUE D'ARMENIE
ET
LE MINISTERE DES AFFAIRES ETRANGERES
DE LA REPUBLIQUE FRANÇAISE
RELATIVE A L'ENSEIGNEMENT DU FRANÇAIS
DANS LES ETABLISSEMENTS SCOLAIRES DE LA REPUBLIQUE D'ARMENIE**

Le Ministère de l'Éducation et de la Science de la République d'Arménie et le Ministère des Affaires étrangères de la République Française, ci-après dénommées les Parties, sont convenus de ce qui suit :

ARTICLE 1

Le sous-paragraphe 1 du paragraphe 2 de l'Article 2 de la Convention entre le Ministère de l'Éducation et de la Science de la République d'Arménie et le Ministère des Affaires étrangères et européennes de la République Française relative à l'enseignement du français dans les établissements scolaires de la République d'Arménie, signée le 18 mars 2011, est modifié comme suit :

« 1) Créer des programmes d'enseignement du français renforcé pour les classes de la 2^e à la 12^e des écoles du système d'enseignement général ; ».

ARTICLE 2

Le présent Protocole prendra effet le premier jour du deuxième mois suivant la date de réception de la dernière des notifications des Parties relatives à l'accomplissement des procédures internes requises pour son entrée en vigueur.

Fait à Erevan le 13 juillet 2012, en double exemplaire original, chacun en langues française et arménienne, les deux textes faisant également foi.

**Le Ministre
de l'Éducation et de la Science
de la République d'Arménie**



Armen ASHOTYAN

**Pour le Ministre
des Affaires étrangères
de la République Française**



**Henri REYNAUD
Ambassadeur de France en Arménie**

Համաձայնագիր

**Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարության**

և

**Ֆրանսիայի Հանրապետության Արտաքին գործերի և
Եվրոպայի հարցերով նախարարության**

միջև

**Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում
Ֆրանսերենի ուսուցման մասին**

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ հայկական կողմ) և Ֆրանսիայի Հանրապետության Արտաքին գործերի և Եվրոպայի հարցերով նախարարությունը (այսուհետ՝ ֆրանսիական կողմ) հսկ միասին՝ կողմեր:

Ինք ընդունելով Ֆրանսիայի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև մշակութային, գիտական և տեխնիկական համագործակցության մասին 1995թ. նոյեմբերի 4-ի համաձայնագիրը

առաջնորդվելով կողմերի փոխադարձ պատրաստակամությամբ խթանելու մշակութային համագործակցությունը, խորացնելու և ամրապնդելու գոյություն ունեցող սերտ կապերը, մասնավորապես՝ երկու երկրների կրթական համակարգերի միջև կապերի իստանդմանն, ուղղված ծրագրերը, օժանդակելու Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում ֆրանսերենի խորացված դասընթացներ և ֆրանսերեն լեզվով լրացուցիչ կրթական ծրագրեր կազմակերպելուն, համաձայնեցին հետևյալի մասին:

Տողված 1. Համաձայնագրի նպատակը

Սույն Համաձայնագրի նպատակն է կողմերի սերտ համագործակցության միջոցով խթանելու ֆրանսերեն լեզվի նկատմամբ հետաքրքրությունը սովորողների շրջանում, ապահովել ֆրանսերեն լեզվի դասավանդման որակյալ մակարդակը և ժամանակակից պահանջները բավարարող ուսումնասիրողական բազայի ձևավորումը սույն Համաձայնագրով նախատեսվող հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Այդ նպատակներն ակնհայտորեն համար կողմերը պարտավորվում են.

- 1) Աջակցել Հայաստանի Հանրապետությունում ֆրանսերեն լեզվի խորացված ուսուցում կազմակերպելուն և ֆրանսերեն լեզվով լրացուցիչ կրթական ծրագրերի զարգացմանը.
- 2) Հանակարգել երկու կողմերի միջև համագործակցությունը

Տողված 2. Կողմերի պարտավորությունները

1. Հայկական կողմը պարտավորվում է՝

- 1) ստեղծել հանրակրթական դպրոցների 5-ից 12-րդ դասարաններում ֆրանսերեն լեզվի խորացված ուսուցման ծրագրեր,
- 2) մշակել և հաստատել ֆրանսերեն լեզվով լրացուցիչ կրթական ծրագրեր,
- 3) ապահովել համապատասխան կրթական կառույցների ակտիվ մասնակցությունը և համագործակցությունը,
- 4) տրամադրել անհրաժեշտ տարածքներ՝ դասավանդողների վերապատրաստումների, աշխատանքային հանդիպումների և սեմինար պարապմունքների համար:

2. Ֆրանսիական կողմը պարտավորվում է՝

1) օժանդակել ֆրանսերենի խորացված ուսուցմամբ դասարաններում ուսումնական ծրագրերին համապատասխանող ուսումնական նյութերի բազայի ձևավորմանը:

2) ացակցել Կրթության ազգային ինստիտուտին՝ ֆրանսերենի խորացված ուսուցման դասընթացների ուսումնական ծրագրերի և ֆրանսերեն լեզվով լրացուցիչ կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում:

3) օժանդակել ֆրանսերենի խորացված ուսուցմամբ դասընթացների դասավանդողների վերանայնորոշման և ստաժավորման կազմակերպմանը Հայաստանում, Ֆրանսիայում կամ որևէ ֆրանսախոս երկրում:

4) որոնել լրացուցիչ միջոցներ, հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում, ֆրանսերեն լեզվով ուսումնական ծրագրերի աշխատանքների կազմակերպման նպատակով:

Հոդված 3. Գործողության շրջանակը

1) Սույն համաձայնագրի գործողությունը տարածվում է հայկական կողմից հանտանոված ցանկում ընդգրկված դպրոցների վրա: Այդ ցանկը ենթակա է վերանայման ամեն տարի: Այլ ուսումնական հաստատություններում ֆրանսերենի խորացված ուսուցմամբ դասընթացներ կարող են կազմակերպվել հայկական կողմի համաձայնությամբ՝ սովյալ հանրակրթական հաստատության դիմումի հիման վրա:

2) Ֆրանսերենի խորացված ուսուցմամբ և ֆրանսերեն լեզվով լրացուցիչ կրթական ծրագրերին մասնակցած սովորողը, ցանկության դեպքում, կարող է մասնակցել դպրոցական մակարդակի ֆրանսերեն լեզվի տարրական դիպլոմի համակարգի (դպրոցական DELF) քննությանը: Վերջինիս նպատակն է սովորողներին հասցնել օտար լեզուների տիրապետման համաեվրոպական համակարգի (CECR) B2 մակարդակին: Դպրոցական DELF-ի քննությունը չի փոխարինում ֆրանսերենի հիմնական և միջնակարգ (ավագ) դպրոցների ավարտական և պետական ավարտական քննություններին:

Գպրոցական DELF-ը Ֆրանսիայի կրթության նախարարության պաշտոնական քննությունը, կազմակերպվում է Ֆրանսիայի դեսպանության և Մշակույթի և համագործակցության հարցերով խորհրդականի ղեկավարությամբ, որը նախագահում է քննական հանձնաժողովը և նշանակում հանձնաժողովի անդամներին:

3) Բնումնատության վերջին տարվա ավարտին, ֆրանսերեն լեզվով լրացուցիչ կրթական ծրագրերի անբողջությունն ուսումնասիրած և գործող հրահանգների համաձայն թեստեր և քննություն հանձնած սովորողներին հայկական կողմից և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության կողմից տրվում են վկայականներ:

Այն սովորողները, ովքեր հաջողությամբ հանձնել են Գպրոցական DELF-ի քննությունը և ոչ լեզվական առարկաներից ստուգաթիշները ստանում են հայկական կողմից և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության կողմից համատեղ տրվող հատուկ հավաստագրեր:

4) Յուրաքանչյուր տարի նշված դպրոցների, ֆրանսերեն լեզվով լրացուցիչ կրթական ծրագրեր, իրականացնող դպրոցների բարձր առաջադիմություն ունեցող սովորողները ընտրված տվյալ հաստատության կողմից, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության հետ համաձայնեցված, ճանաչողական այցով կարող են մեկնել Ֆրանսիա:

Հոդված 4. Կիրառվում և վերահսկողությունը

1) Կողմերը պարբերաբար տեղեկացվում են Սույն Համաձայնագրով նախատեսված ծրագրերի, իրականացման, ինչպես նաև արդյունքների գնահատման վերաբերյալ:

2) Կողմերի ներկայացուցիչները պարբերաբար համոզվում են սույն Համաձայնագրով նախատեսվող ծրագրերի ընթացքը քննարկելու նպատակով:

Հոդված 5. Տարածայնություններ

Սույն Համաձայնագրի կիրառման ընթացքում առաջացող վեճերն ու տարածայնություններն կլուծվեն Կողմերի միջև խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 6. Ուժի մեջ մտնելու ժամկետները, փոփոխությունների կատարումը

1) Կողմերից յուրաքանչյուրը իրազեկում է մյուսին՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի իրականացման մասին: Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջին ծանուցումը ստանալուն հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը:

2) Սույն Համաձայնագիրը կաղու է փոփոխությունների ենթարկվել Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ մյուս Կողմի գրավոր համաձայնության դեպքում: Այդ փոփոխություններն ու լրացումները կձևակերպվեն առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և կհանդիսանան վերջինիս անբաժանելի մասը:



3) Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով: Վերջինիս գործունեության ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի բացառությամբ այն դեպքերի, երբ Կողմերից մեկն այն դադարեցնելու իր որոշման մասին մյուս Կողմին գրավոր կձանուցի պայմանագրի վավերականության ժամկետը լրանալուց մեկ տարի առաջ:

4) Սնդին Համաձայնագրի դադարեցման դեպքում Կողմերը երաշխավորում են ավարտին հասցնել նշված հստակապահ հասնատությունների սովորողների ծրագրով նախատեսված ուսումնական փուլը:

Կատարված է Երևանում, 2011 թվականի մարտի 18-ին, երկու բնօրինակով,
յուրաքանչյուրը՝ հայերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում բոլոր
տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության
Կրթության և Գիտության
նախարար:

Ֆրանսիայի Հանրապետության
Արտաքին Գործերի և Եվրոպայի
հարցերով նախարարի անունից:



Անրի ՌԵՅՆՈ
Հայաստանում Ֆրանսիայի դեսպան